ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1753-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2022.11.14-2022.11.27 Պաշտոնական հրապարակման օրը 17.11.2022	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	17.11.2022
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	17.11.2022
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	18.11.2022	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 218-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 1753-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 218-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի ռիսկայնության հիման վրա հսկողության մեթոդաբանությունը հաստատելու մասին» N 218-Ն որոշմամբ հաստատված հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածի 1-ին կետից հանել «սահմանային անցման կետերում» բառերը.

2) հավելվածի 3-րդ կետի N 1 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Աղյուսակ N 1

	Արտադրանքի անվանումը	*Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը (ԱՏԳ ԱԱ)*	*Ռիսկի միավորը*
	Բարձր ռիսկային (10-20 միավոր)		
1.	Խոշոր եղջերավոր կենդանու միս՝ թարմ կամ պաղեցրած	0201	15
2.	Խոշոր եղջերավոր կենդանու միս՝ սառեցրած	0202	17
3.	Խոզի միս՝ թարմ, պաղեցրած	0203	15
4.	Խոզի միս՝ սառեցրած	0203	17
5.	Ոչխարի կամ այծի միս՝ թարմ, պաղեցրած	0204	15

6.	Ոչխարի կամ այծի միս՝ սառեցրած	0204	17
7.	Ձիու, ավանակի, ջորու միս՝ թարմ, պաղեցրած	0205	15
8.	Ձիու, ավանակի, ջորու միս՝ սառեցրած	0205	17
9.	Խոշոր եղջերավոր կենդանու, խոզի, ոչխարի, այծի, ձիու, ավանակի, ջորու սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած	0206	15
10.	Խոշոր եղջերավոր կենդանու, խոզի, ոչխարի, այծի, ձիու, ավանակի, ջորու սննդային ենթամթերք՝ սառեցրած	0206	17
11.	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0105 ապրանքային դիրքում նշված՝ ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած	0207	15
12.	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0105 ապրանքային դիրքում նշված՝ ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք՝ սառեցրած	0207	17
13.	Այլ միս և մսից սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած	0208	15
14.	Այլ միս և մսից սննդային ենթամթերք՝ սառեցրած	0208	17
15.	Չհալեցրած կամ այլ եղանակով չստացված՝ անյուղ մսից առանձնացված խոզի ճարպ և ընտանի թռչունների ճարպ՝ թարմ, պաղեցրած, աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած	0209	15
16.	Չհալեցրած կամ այլ եղանակով չստացված՝ անյուղ մսից առանձնացված խոզի ճարպ և ընտանի թռչունների ճարպ՝ սառեցրած	0209	17
17.	Միս և մսից սննդային ենթամթերք՝ աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած. սննդային ալյուր՝ ստացված մսից կամ մսի ենթամթերքից	0210	15
18.	Ձկներ՝ թարմ կամ պաղեցրած՝ բացառությամբ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0304 ապրանքային դիրքում ընդգրկված ձկան ֆիլեի և ձկան այլ մսի	0302	15
19.	Ձուկ սառեցրած՝ բացառությամբ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0304 ապրանքային դիրքում ընդգրկված ձկան ֆիլեի և ձկան այլ մսի	0303	17
20.	Ձկան ֆիլե և ձկան այլ միս (ներառյալ խճողակը)՝ թարմ, պաղեցրած	0304	15
21.	Ձկան ֆիլե և ձկան այլ միս (ներառյալ խճողակը)՝ սառեցրած	0304	17
22.	Ձուկ՝ չորացրած, աղ դրած կամ աղաջրի մեջ դրած. ձուկ՝ ապխտած՝ մինչեւ ապխտելը կամ ապխտելու ընթացքում ջերմամշակման ենթարկված կամ չենթարկված. ձկնալյուր՝ մանր և խոշոր աղացվածքի, և ձկներից հատիկներ՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի	0305	15
23.	Խեցգետնակերպեր՝ թարմ, պաղեցրած, չորացված, աղի կամ աղաջրի մեջ դրած խեցիով կամ առանց խեցի, խեցիով կամ առանց խեցիի մինչև ապխտումը կամ ապխտման ընթացքում ջերմային մշակման չենթարկված կամ ենթարկված ապխտած խեցգետնակերպեր, շոգեխաշված կամ եփած պաղեցված կամ չպաղեցված, չորացված, աղի, աղաջրի մեջ դրված խեցիով խեցգետնակերպերի սննդի մեջ օգտագործելու համար պիտանի խոշոր և մանր աղացվածքի ալյուր և խեցգետնակերպերից հատիկներ	0306	15
24.	Խեցիով կամ առանց խեցիի խեցգետնակերպեր՝ սառեցրած	0306	17
25.	Կակղամորթներ՝ խեցու մեջ կամ առանց խեցու, թարմ, պաղեցրած, չորացրած, աղ դրված կամ աղաջրի մեջ դրված. կակղամորթներ ապխտած՝ խեցու մեջ կամ առանց խեցու, մինչև ապխտելը կամ ապխտելու ընթացքում ջերմամշակման ենթարկված կամ չենթարկված. ալյուր՝ մանր և խոշոր աղացվածքի, և հատիկներ կակղամորթներից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի	0307	15
26.	Կակղամորթներ՝ խեցիով կամ առանց խեցու՝ սառեցրած	0307	17

27.	Ջրային անողնաշարավորներ՝ բացի խեցգետնակերպերից և կակղամորթներից, թարմ, պաղեցրած, չորացրած, աղ դրված կամ աղաջրի մեջ դրված. ջրային անողնաշարավորներ՝ բացի խեց-գետնակերպերից և կակղամորթներից, ապխտած, մինչեւ ապխտելը կամ ապխտելու ընթացքում ջերմամշակման ենթարկված կամ չենթարկված. ալյուր՝ մանր և խոշոր աղացվածքի, և հատիկներ՝ ջրային անողնաշարավորներից՝ բացի խեցգետնակերպերից և կակղամորթներից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի	0308	15
28.	Ջրային անողնաշարավորներ՝ բացի խեցգետնակերպերից և կակղամորթներից, սառեցրած	0308	17
29.	Կաթ-կաթնամթերք	0401-0406	15
30.	Թարմ, կոնսերվացված կամ եփած կճեպով թռչնի ձու	0407	15
31.	Թարմ, չորացրած, շոգեխաշած կամ եփած, ձևած, սառեցված կամ այլ եղանակով կոնսերվացված (պահածոյացված), շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած առանց կճեպի թռչնի ձու և ձվի դեղնուց	0408	15
32.	Կենդանական ծագման սննդամթերք՝ այլ տեղում չնշված կամ չներառված	0410	15
33.	Պատրաստի սննդամթերք մսից, ձկից կամ խեցգետնանմաններից, կակղամարմիններից և ջրային այլ անողնաշարավորներից, պատրաստի կամ պահածոյացված ձուկ, ձկնկիթ	1601-1605	15
34.	Մթերքներ տուսներ պատրաստելու համար, պատրաստի ապուրներ ու արգանակներ	2103-2105	10
35.	Կենդանիների (բացի ձկներից) աղիներ, պարկեր և ստամոքսներ, ամբողջական և կտորներով, թարմ և սառեցված, աղաջրում և աղած, չորացված և ապխտած	0504	15
36.	Մակարոնեղենային արտադրանք լցոնով, ջերմային մշակման ենթարկված կամ չենթարկված, կամ այլ եղանակով մշակված	190220	15
37.	Սպիտակուցային խտանյութեր և թելիկավոր և շերտավոր սպիտակուցային նյութեր	210610	10
38.	Վիտամինների և հանքային նյութերի խառնուրդ՝ նախատեսված սնուցման հավասարակշռված լրացման համար	2106909803	15
39.	Վաղ հասակի երեխաների համար նախատեսված պատրաստի սննդամթերք՝ նախատեսված մանրածախ առևտրի համար	1901100000	15
	Միջին ռիսկային (4-9 միավոր)		
40I	Բանջարեղեն և որոշ ուտելի արմատապտուղներ և պալարապտուղներ	0701-0714	9
41I	Ուտելի մրգեր և ընկույզներ. ցիտրուսային պտուղների կեղև ու դդմի կճեպներ	0801-0814	6
42I	Կենդանական կամ բուսական ծագում ունեցող ճարպեր և յուղեր ու դրանց տրոհումից ստացվող մթերքները. պատրաստի սննդային ճարպեր	1501-1520	9
43I	Կակաո և դրանից պատրաստված մթերք	1801-1806	4
	Ցածր ռիսկային (1-3 միավոր)		
44.	Բնական մեղր	0409	3
45.	Սուրճ, թեյ, մատե կամ պարագվայական թեյ և համեմունքներ	0901-0910	1
46.	Հացազգիներ	1001-1008	1
47.	Ալրաղացաձավարային արդյունաբերության արտադրանք. ածիկ, օսլաներ, ինուլին, հացահատիկային սոսնձանյութ	1101-1109	2
48.	Յուղատու սերմեր և պտուղներ, այլ սերմեր, պտուղներ և հատիկներ	1201-1208	1
49.	Շաքար և շաքարից պատրաստված հրուշակեղեն	1701-1704	1
50.	Պատրաստի մթերք՝ հացաբույսերի հատիկներից, ալյուրից, օսլայից կամ կաթից, ալյուրից պատրաստված հրուշակեղեն	1901-1905 (բացի 1901100000 կոդից)	1

51.	Բանջարեղենի, մրգերի, ընկույզների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից ստացվող մթերք	2001-2009	1
52.	Սննդամթերք՝ այլ տեղ չնշված կամ չներառված	2106 (բացի 210610 կոդից)	1
53.	Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ և քացախ	2201-2209	3
54.	Կերակրի աղ	2501	1

3) հավելվածի 6-րդ[ուղղ.] կետի N 2 աղյուսակի 2-րդ և 3-րդ սյունակները «ISO» բառից հետո լրացնել «BRC, IFC» բառերով.

4) հավելվածի 12-րդ, 13-րդ կետերը «Եթե»[ուղղ.] բառերից հետո լրացնել «սույն մեթոդաբանության» բառերով, իսկ 15-րդ կետում «հավելվածի» բառը փոխարինել «մեթոդաբանության» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

17.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 17 նոյեմբերի 2022 թվական: